

- ճագոմը, վերջինիս խորհրդապաշտական՝ Եզանկութեան մասին տե՛ս NH. XVI. XCV. 249-251. Անե՛ս՝ Дж. Дж. Фрээр. Зо.юмгя ԵԵԵԵ. с. 615-623.
- 24 Ա. Մարտիրոսեան, *Քրիստոնէութիւնը եւ ազգային ինքնութիւնը*.- «Աշտանակ», Ինայագիտական պարբերագիրք/. հտ. Ա, Երեւան. 1995, էջ 5-13:
- 25 Բուզանդ, III, ԺԳ:
- 26 Խորենացի, II, Զ, ԽԱ, ԽԲ, տե՛ս Անե՛ս՝ Գ. Քոչարեան, «Արքունի ծառայարդ ապարանքը»

- Երուանդակերտից առաջ եւ յետոյ*, - Գիտական աշխատութիւններ. հ. II, Գիւմրի. 1999, էջ 120-126, նոյնի, Արտաշէս Ա Բարին որպէս հզօր պետականութիւն կերտող.- Գիտական աշխատութիւններ, հտ. III, Գիւմրի. 2000, էջ 26:
- 27 Խորենացի, III, Ը:
- 28 Արտայայտութիւններն ըստ՝ Ա. Մարտիրոսեան, նշ. աշխ.:
- 29 Ղ. Փարպեցի, *Հայոց պատմութիւն*, Երեւան, 1982, էջ 350-351:

ՐԱՖՖՈՒ «ԽԵՆԹԸ» 125 ՏԱՐԵԿԱՆ Է

Խաչիկ Սամուելեան

1880 թուականի յունիսի 4-ին Թիֆլիսի «Մշակ» լրագրի 92-րդ համարում աւարտուում է Րաֆֆու «Խենթը» վերնագրով վէպի տպագրութիւնը:

Որոշ ժամանակ անց, Շուշիում, Րաֆֆու աշակերտ Աբէլ Ապրեսեանի հոգացողութեամբ, «Խենթը» տպագրուում է նաեւ առանձին գրքով:

2005 թուականի յունիսի 4-ին, Րաֆֆու «Խենթը» վէպը դառնում է 125 տարեկան:

Այս վէպը մեծ ու ծանրակշիռ արժէք ունի գրող Րաֆֆու ստեղծագործական կեանքում: Աչքի ընկնող տեղ է գրաւում նաեւ Հայ վիպագրութեան պատմութեան մէջ: «Խենթը» արժանացել է մեծ ուշադրութեան եւ բարձր գնահատականի Հայ գրաքննադատութեան կողմից: Գրուել եւ տպագրուել են բազմաթիւ հետազօտութիւններ եւ ուսումնասիրութիւններ այս ստեղծագործութեան մասին: Շարքային ընթերցողների կողմից, պարբերական մամուլի միջոցով, «Խենթը» արժանացել է մեծաքանակ դրուատանքների:

Տարիների ընթացքում Րաֆֆու այս վէպը տասնչորս անգամ հրատարակուել է Հայերէն: Եօթ անգամ լոյս է տեսել ռուսերէն եւ երկու անգամ վրացերէն: Թարգմանուել ու տպագրուել է անգլերէն, գերմաներէն, իսպաներէն, չեխերէն, ռումիներէն, թուրքերէն, մոլդաւերէն, վեց անգամ վեր է ածուել պիեսի: Տարբեր թուականների ընթացքում երեսունհինգ անգամ ներկայացուել է այլեւայլ բեմերում:

«Խենթի գրութիւնը ունի ծաւալուն եւ բազմաբնոյթ դրուագներով Հարուստ

Ր Ա Ֆ Ֆ Ւ

Խ Ե Ն Թ Ը

Երկաներ վերջին Ռուս-թուրքական պատերազմից

ՀՐԱՏԱՐԱՆԻՉ ԱԲԷԼ ԳԱՐԵՅԱՆ ԱՂՐԵՍԵԱՆԷ

Շ Ո Ւ Շ Ի

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄԻՐԱԶԱՆԻ ՄԱՀՏԵՍԻ-ՑԱՆՔԵԱՆԷ

1881

պատմութիւն: Յայտնի է, որ 1877 թուականի օգոստոսի վերջերին Րաֆֆին իբրեւ մանկավարժ հրաւիրուում է Ագուլիս, երկսեռ դպրոցում վարելու Հայոց լեզուի եւ պատմութեան դասատուի պաշտօնը: Նա միաժամանակ «Փորձ» ամսագրի խմբագիր Աբգար Յովհաննիսեանից յանձնարարութիւն է ստանում «Հետազօտել Հայոց գաղթականների վիճակը, որոնք Ռուս-թրքական պատերազմի պատճառով Դհարից նահանջող Տէր-Ղուկասովի զօրքերի հետ անցել էին Ռուսահայաստան եւ ապրուստ էին որոնում Երեւանեան նահանգի գաւառներում»:

1877 թուականի սեպտեմբերի վերջերին դուրս գալով Թիֆլիսից եւ անցնելով Քուռ գետի երկայնքով, Ագուլիս մեկնող Բաֆֆին հասնում է Քարուանսարայ գիւղը: Այնտեղից առաջանալով, Դիլիջանի անտառում, ծառերի հովանու տակ հանդիպում է ուռու-թրքական պատերազմում վիրավորված զինուորների առաջին վրաններին: Ծառի տակ նրա ուշադրութիւնը գրաւում է մի վիրավոր զինուոր, որը մասնակցել էր Բայազետի կռիւներին եւ տեղեակ էր պատերազմական դէպքերի մանրամասնութիւններին: Բաֆֆին զրուցում է նրա հետ: «Ինձ շատ հետաքրքրական էր, - գրում է նա, - լսել Բայազետի անցքը այն տղամարդից, որ նոյն կռիւների հերոսներից մէկն էր...

- Երբ Տէր-Ղուկասովը առաջ գնաց, - պատմում է կուռին մասնակից զինուորը, - դէպի սուրբ Յովհաննէսի եւ Ալաշկերտի կողմերը, Բայազետը պահպանելու համար թողեց շատ փոքր զօրք... քանի որ ոչ մի կողմից վտանգ չէինք սպասում»: Ծարունակելով իր պատմութիւնը՝ վիրավոր զինուորը նկարագրում է շէյխ Իբադուլլահի ու Ջալալեղդինի հրոսակախմբերի յարձակումը Բայազետի վրայ... Բաշիբոզուկները եկան մօտ 20 հոգի բազմութեամբ... Բայազետը պաշարուեցաւ: Մեր սալաթները եւ կամաւորների մի փոքրիկ մասը հազիւ կարողացան բերդը մտնել եւ այնտեղ պաշտպանուել... Մենք լաւ էինք ընդդիմանում, քանի որ վառող եւ գնդակ ունէինք, բայց երբ որ բոլորը սպառուեցաւ, սկսեցինք սրբորով վրայ տալ... Այնուհետեւ քրդերը մտան քաղաք:

- Բայց ինչ եղան բերդի մէջ մտածները, - անհամբերութեամբ հարցնում է Բաֆֆին:

- Նրանք երկար մնացին այնտեղ, անտանելի տանջանքով համբերելով

քաղցի ու ծարաւի, մինչեւ մի աբարանցի հայ տղայ, որ լաւ քրդերէն խօսել գիտէր, իրան քուրդ ձեւացրեց եւ քրդերի բազմութեան միջից անցնելով խաբար տարաւ, այնուհետեւ Տէր-Ղուկասովը եկաւ նրանց ազատեց»:

Ծարունակելով ճանապարհը եւ անցնելով Սեւանը, մօտակայ գիւղերում Բաֆֆին հանդիպում է գաղթականների առաջին խմբին: Ախտայում մի խաւար գոմի մէջ Բաֆֆին հանդիպում է Ալաշկերտի հարուստ գիւղերից մէկի տանուտէր Մկրէին եւ ամբողջ գիշեր զրուցում է նրա հետ: Ցնցոտիների մէջ սովալլուկ դէմքով ծերունի տանուտէրը իր սիրտը բացում է զրուցակցի առջեւ: Մկրէն ողբում է զաւակների ու հարազատների կորուստը, պատմում է իր անբաւ հարստութեան եւ պատահած օրհասի մասին: «Ամա էս չէինք, ինչ որ կը տեսնէք, - ասում է նա, - թորկեցինք մըր կանաչ արտեր, մըր պաղ-պաղ աղբիւրներ... Մենք լէ մըզի գետրայ ունէինք տուն-տեղ, արտ գութան, լուծ գոմշուք, կթու մատակներ, լուծքով եզներ, կթու կովեր, հարուրով ոչխարներ, աղեկ գառներ... Օրը հարուր մարդ մըր դռանը հաց կուտէր... Անտէր թողինք մըր տունն ու տեղը, ա՛խ թորկինք մըր պապերու գերեզման... եկանք էսա երկիր»: Եւ այսպէս տանուտէր խաչոյին յիշեցնող ծերունուց Բաֆֆին լսում է Ալաշկերտի հովտում ապրող հայերի բնաջնջման ողբերգական պատմութիւնը:

Վաղարշապատում նա հանդիպում եւ զրուցում է Ուչքիլիսայի վիճակի առաջնորդ Յովհաննէս վարդապետի հետ: Վերջինս արցունքն աչքերին երկար, շատ երկար պատմում է Ալաշկերտի գլխին եկած աղէտը: Վանքի հիւրանոցում աղիւսով ծածկուած մերկ յատակի վրայ Բաֆֆին տեսնում է սեւորակ աչքերով մի

խամրած օրիորդի հիւանդ եղբօրը խնամելիս, սրտառուչ մի հանդիպում, որը հետագայում օգտագործւում է իբրեւ նախադէպ Լալայի կերպարի վաղարշապատեան շրջանի համար:

Վաղարշապատում նա լսում է բժիշկ Բագրատ Նաւասարդեանի ցուցաբերած անշահախնդիր վերաբերմունքի պատմութիւնը, նրա հոգատարութիւնը բնութագրող մանրամասնութիւններով: Անհրաժեշտ տեղեկութիւններ ձեռք բերելու համար Բաֆֆին իր մենախցում կազմակերպում է հանդիպում Ալաշկերտի գաղթականութեան ղեկավարների, նրանց վիճակի առաջնորդի ու վարդապետների հետ:

Ճանապարհորդութեան ընթացքում Բաֆֆու կատարած գրառումներից մենք քաղուածաբար մէջ բերեցինք յատկապէս այն հատուածները, որոնք սերտ կապ ունեն «խենթում» արծարծուած հարցերի հետ եւ որոնք գրութեան ընթացքում, ինչպէս ուղղակի, այնպէս էլ անուղղակի իմաստով տեղ են գտել վէպի ընդհանուր հիւսուածքի մէջ:

1877 թ. օգոստոսին գաղթականների թշուառ կացութեանը ծանօթանալուց եւ ապա իր տեսածն ու լսածը գրի առնելուց յետոյ Բաֆֆին ուղեւորւում է Ագուլիս՝ վարելու իրեն տրուած պաշտօնը: Նոյն թուականի վերջերին նա կատարում է նաեւ իր ստանձնած պարտաւորութիւնը՝ գրում եւ Աբգար Յովհաննիսեանին է ուղարկում գաղթականների վիճակին նուիրուած «Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» խորագրով ուղեգրութիւնը:

Դիլիջանի անտառում Բայազետի հերոս Սամսոն Տէր-Պողոսեանի քաջագործութեան մասին, վիրավոր զինուորի պատմածի հանդէպ Բաֆֆու ցուցաբերած արտակարգ հետաքրքրութիւնը եւ «Փորձին» ուղարկուած թղթակցութեան մէջ

այդ դէպքին յատկացրած՝ շատ աննշան տողերը եւ նրա հպանցիկ վերաբերմունքը ուշադրութիւն է գրաւում ու տարակուսանքի տեղիք է տալիս:

Հարկ չկայ ասելու, որ նման դրուագի վիպական արժէքը շատ լաւ հասկացող Բաֆֆին այս կարգի մօտեցում է ցուցաբերել ոչ բնաւ պատահականօրէն: Անհաւանական չէ, որ ստուերում թողնուած այս փաստի մէջ է թաքնուած «խենթը» վէպի յղացման սկիզբը: Պէտք է ենթադրել, որ հէնց այս շրջանում էլ Բաֆֆու մտայղացումների մէջ հասունանում է այդ թեմայով վէպ գրելու եւ Սամսոն Տէր-Պողոսեանին գլխավոր դեր յատկացնելու գաղափարը, որի համար էլ նա չի ցանկանում «Փորձին» ուղարկուող թղթակցութեան մէջ բացայայտել ու ժամանակից շուտ ընթերցողին հրամցնել Բաֆֆիական վէպի համար բացառիկ արժէք ունեցող այս դրուագը:

«Խենթի» յղացման մասին ճիշտ նոյնպիսի տեսակէտ է յայտնում նաեւ այդ գործերին քաջատեղեակ Լէօն: Խօսելով ուռու-թրքական պատերազմի ժամանակ Վաղարշապատ գաղթած արեւմտահայերի ծանր կացութեան ու նրանց հանդէպ Բաֆֆու եւ Բագրատ Նաւասարդեանի ցուցաբերած վերաբերմունքի մասին՝ Լէօն գրում է. «Թշուառների դրութիւնը երկու մարդկանց սրտին շատ էր մօտ: Նրանց տանջանքների տեղը չափազանց ազդու էր, չափազանց բեղմնաւոր ստեղծագործող ուժով: Մէկ այցելում (նկատի ունի Բագրատ Նաւասարդեանին) «Հայոց բարեգործական ընկերութեան միտքը»¹ (ընդգծումն իմն է - Խ. Ս.):

1878 թ. սկզբներին Բաֆֆին թէեւ զբաղուած էր «Ջալալեղդին» վիպակի գրութեամբ, այսուհանդերձ նա ժամանակ

է գտնում գրելու հասարակական ու քաղաքական բնոյթի հրատապ հարցերին նուիրուած խնդիրներ, որոնք «Խենթի» գրութեան ընթացքում, գեղարուեստական պատկերաւորման միջոցով մտնում են վիպական գործողութեան մէջ: Աւելի յաճախ յօդուածներում բարձրացուած գաղափարական հարցադրումները գեղարուեստական լուծում են ստանում վիպական գործողութիւնների միջոցով: «Դատարկ յոյսերով ենք խաբուում» յօդուածում Բաֆֆին քննարկման է ենթարկում այն հարցը, թէ ինչպիսի՞ր մասնակցութիւն ունեցաւ արեւմտահայութիւնը եւ ինչ շահեց պատերազմից. «Ոչինչ, - պատասխանում է Բաֆֆին այդ յօդուածի մէջ, - նա իր տեղում հանգիստ նստեց եւ խոտի նման կռուողների ոտքի տակ տրորուեցաւ եւ նրանց պատերազմական փոշու մէջ խեղդուեցաւ»: Այս այլաբանական ձեւակերպումը փոքր ինչ ուշ ելակէտ է դառնում վիպասան Բաֆֆու համար, եւ նա «Խենթի» շարադրանքում գործողութեան զարգացումն առաջ է տանում այս-այլաբանական պատկերի գեղարուեստական մարմնաւորման հիման վրայ:

«Խենթում» հանդէս բերելով Լեւոն Դուրուկչեանին, Բաֆֆին յօդուածի մէջ նախանշուած դրոյթի համաձայն վիպական իրավիճակ է ստեղծում նրա շուրջը, գործողութեան մէջ ցոյց տալով նրա բնաւորութեան ազնուութիւնն ու խանդավառուող կողմը, միաժամանակ անփորձութիւնն ու անկարողութիւնը:

Վէպի յղացումից անցել էր բաւական ժամանակ. վիպասան Բաֆֆին թեմատիկ առումով կատարել էր մեծածաւալ կուտակումներ, սակայն եղածը նրան չէր բաւարարում գրութեանը ընթացք տալու համար: Բաֆֆին նպատակ ունէր անձամբ հանդիպել Բայազետի ղեպքերի հե-

րոս զարաջորանցի Սամսոն Տէր-Պողոսեանին: Նա քանիցս. հէնց այդ նպատակով եղել էր Վաղարշապատում եւ, այսուհանդերձ, հանդիպումը տեղի չէր ունեցել:

1878 թ. յունիսի սկզբներին Ագուլիսի դպրոցի համար մանկավարժներ հրաւիրելու նպատակով Բաֆֆին մեկնում է Թիֆլիս: Նա ինչպէս գնալու ժամանակ, այնպէս էլ վերադարձին նորից հնարաւորութիւն է ունենում մեկնելու Վաղարշապատ: Հանդիպումը դարձեալ չի իրականացուում: 1879 թ. Բաֆֆին նորից է գալիս Վաղարշապատ: Ահա հէնց այդ այցելութեան ժամանակ տեղի է ունենում բաղձալի հանդիպումը Սամսոն Տէր-Պողոսեանի հետ:

«Ես ինչ-որ յանձնարարականով էջմիածին էի եկել, - պատմել է Սամսոն Տէր-Պողոսեանը Աշոտ Աթանասեանին, - երբ կապոյտ ակնոցներով, մեծ, սեւ բեղերով մի ինչ-որ մարդ առաջս կտրեց, ծանօթացաւ, անուանելով իրեն Մելիք-Յակոբեան եւ ասելով, որ ինձ հետ կարեւոր խօսակցութիւն ունի, տարաւ միաբաններից մէկի խոցը եւ ահա այստեղ սկսեց ինձ հարցուփորձի ենթարկել իմ մի տարի առաջ Բայազետում եւ գնեցրալ Տէր-Ղուկասովի բանակում արածների մասին: Ես ամէն կերպ աշխատում էի կարճ կապել, բայց այդ մարդը յախիցս բռնել պոկ չէր գալիս, հարցեր էր, որ տալիս էր եւ ասածներս գրում էր ծոցատետրում: Այդ պահին ներս եկաւ բժիշկ Բագրատ Նաւասարդեանը, որ գաղթականների բուժող ու խնամող վանքի բժիշկն էր եւ կամացուկ ասաց ականջիս՝ սա մեր յայտնի գրող Բաֆֆին է. մանրամասն պատմիր, նա, կարծես, ինչ-որ բան է ուզում գրել այդ պատերազմի մասին: Եւ ես սկսեցի պատմել ու պատասխանել նրա տուած հարցերին, որից յետոյ դուրս եկա ու գնացի իմ գործին»²:

Նոյնքան հաւաստի, յստակ ու փաստական չեն այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են վէպում բժշկապետի նախատիպ Բագրատ Նաւասարդեանի ու Բաֆֆու հանդիպման մանրամասներին: Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան տասնամեակին նուիրուած վերոյիշեալ յօդուածում Լէօն այն միտքն է յայտնում, որ 1877 թ. ամռանը, երբ Բաֆֆին ալաշկերտցիների վիճակն ուսումնասիրելու նպատակով եղել է Վաղարշապատում, միմեանց են հանդիպել, ուստի նաեւ ծանօթացել ու զրուցել են վիպասան Բաֆֆին եւ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանը:

Թիֆլիսից Ագուլիս մեկնելու ժամանակ, երբ Բաֆֆին յանձնարարութիւն ունէր ուսումնասիրել ալաշկերտցիների վիճակը, այդ հանդիպումը չէր կարող տեղի ունենալ, որովհետեւ ըստ «Ծանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս» ուղեւորութեան մէջ արուած հաւաստիացման Բագրատ Նաւասարդեանը այդ շրջանում մեկնել էր Թիֆլիս: Սակայն այն հանգամանքը, որ Բաֆֆու եւ Սամսոնի հանդիպման ժամանակ Բագրատ Նաւասարդեանը իբրեւ նախածանօթ մասնակցել է նրանց զրոյցին եւ տեղեակ է եղել Բաֆֆու այն մտադրութեանը «... որ մի բան է ուզում գրել պատերազմի մասին» հիմք է տալիս ասելու, որ նրանք նախօրոք հանդիպել ու զրուցել են միմեանց հետ: Այդ հանդիպումը, պէտք է ենթադրել, որ տեղի է ունեցել աւելի վաղ՝ թերեւս 1877 կամ 1878 թ. ամռանը, երբ Բաֆֆին Երեւանի վրայով անցնում էր Թիֆլիս:

Նրանց ծանօթութիւնը ծայր է առել այնպստ պարագաներում, սակայն վերջինս անշահախնդիր հայրենասիրութեան եւ հասարակական լայն գործունէութեան շնորհիւ, դառնում է Բաֆֆու համակրե-

լի մարդկանցից մէկը, եւ իբրեւ առաքինութեամբ օժտուած անձ, նախատիպ է ծառայում ոչ միայն «Խենթում»՝ բժշկապետի, այլեւ «Ոսկի աքաղաղում»՝ Ստեփանի եւ «Կայծերում»՝ Ասլանի կերպարների համար:

Բագրատ Նաւասարդեանի վիպական կերպարը պայմանաւորող յայտնի փաստերը, համեմատաբար աւելի սակաւ են, քան Սամսոն Տէր-Պողոսեանի մասին եղածները, սակայն այն, ինչ մնացել է անյայտութեան մէջ, լրացւում է մի շատ արժէքաւոր վաւերագրի միջոցով: Տարիներ առաջ ԳԱ թղթակից անդամ, դուրսուր-պրոֆեսոր Ռուբեն Զարեանը մեզ է նուիրել «Խենթը» վէպի Բագրատ Նաւասարդեանի անձնական օրինակը, որտեղ լուսանցքներում արուած գրառումները շատ արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում ինչպէս նախատիպերի անձնաւորութեան, այնպէս էլ վիպական գործողութիւնների ու իրական կեանքի միջեւ վիպասանի ստեղծած աղբյուրների վերաբերեալ³: Այս գրքի լուսանցքներում եղած գրառումների հիման վրայ կարելի է գաղափար կազմել, թէ տուեալ գեղարուեստական պատկերը կամ դրուագը ինչ նախադէպից է ծնունդ առել եւ ինչպիսի փոխակերպման է ենթարկուել անցնելով Բաֆֆու ստեղծագործական լաբորատորիայի միջով: Բ. Նաւասարդեանի նշումների հիման վրայ կարելի է յստակ պատկերացում կազմել, թէ որ հարցերում է նա համերաշխուել «Խենթի» հեղինակի հետ եւ, որում՝ հակադրուել նրան: Հաւանութիւն տալով Բաֆֆու գաղափարներին, նա գրքի ընդգծուած լուսանցքներում գրել է «...Մարգարէ Բաֆֆի» եւ ընդհակառակն, դժգոհ լինելով վէպի ժթ գլխում Վարդանի կողմից Սալմանին տուած դրական գնահատականից, լուսանցքում գրել է. «Երբեք»: Այնտեղ,

ուր Բաֆֆին խօսում է երիտասարդ, հարուստ վաղարշապատցի բժշկի մասին, տողատակում նա ծառայուն տեղեկություն է տուել իր հօր՝ աղջաղալեցի Աբրահամ աղայի եւ նրա միջոցներով իր ստացած բժշկական բարձրագույն կրթութեան մասին: Յաջորդ էջում Բաֆֆին խօսում է բժշկի անվարձ այցերի եւ ձրի դեղամիջոցներ բաժանելու մասին, նա յայտնում է, որ գաղթականութեանը օգնելու առիթով իր հօր ու մօր փողերից ծախսել է 40.000 ռուբլի:

Հետաքրքիր է եւ ուշադրութեան արժանի տանուտէր Խաչոյի կերպարի նախատիպի հանդէպ Բաֆֆու դրսեւորած ստեղծագործական մօտեցումը: Կերպարի փաստագրման հարցում նրա համար նախատիպ է ծառայել Ալաշկերտի գիւղերից մէկի տանուտէր Մկրէն, որի հետ, ինչպէս վերելում ասացինք, նա հանդիպել եւ զրուցել էր Ախտայում, միւս հարցերում Բաֆֆին իբրեւ նախատիպ աչքի առաջ է ունեցել իր հօրը՝ Մելիք-Միրզաբեկին, որի բնաւորութեան գծերի ու նահապետական առաքինութիւնների նկարագրութեանն այլեւայլ առիթներով անդրադարձել է ո՛չ միայն Բաֆֆին, այլեւ Մելիք-Միրզաբեկին մօտիկից ճանաչող Բաֆֆու մերձակոր բարեկամ, նրա յուշագիր Աւագ-Խան Աւթանդիլեանը:

«Խենթի» գրութիւնը փաստական առումով սկիզբ է առնում 1879 թ. կէսերին, երբ Բաֆֆին Վաղարշապատում հանդիպում ու զրուցում է Վարդանի կերպարի նախատիպ Սամսոն Տէր-Պողոսեանի հետ եւ նրա պատմածները գրի է առնում իր ծոցատետրում, երբ այդ նոյն շրջանում Բեռլինի կոնգրեսում Եւրոպական պետութիւնների սաղրանքների շնորհիւ հայ իրականութեան մէջ տեղի է ունենում համընդհանուր հիասթափութիւն:

Բեռլինի կոնգրեսը ցոյց տուեց, որ ճիշտ էին Բաֆֆու կանխատեսումները: Այդ պատերազմից արեւմտահայ ժողովուրդը ոչ միայն օգուտ չունեցաւ, այլեւ «ընկնելով կռուողների ոտքերի տակ, - գրում է Բաֆֆին, - խոտի նման տրորուեցաւ»:

Բեռլինի կոնգրեսին յաջորդում է ռուսական զօրքերի դուրսբերումը Արեւմտեան Հայաստանի տարածքից: Ամենուրէք ազդարարում է, որ «Հայրենիքը վտանգի մէջ է»: Բաֆֆին աւելի շատ զբաղուած էր «Կայծերով», այս պարագայում նա, ժամանակի առումով, հնարաւորութիւն քիչ ունէր աւելի հանգամանօրէն զբաղուելու «Խենթի», ուստի հասկանալի է, թէ ինչու 1879-ի կէսերին սկսած այս վէպի գրութեան աշխատանքները 1880 թ. սկզբներին նոր միայն հասնում էր իր աւարտին: Պէտք է աւելացնել, որ այդ շրջանում Բաֆֆին գրում եւ տպագրութեան է յանձնում մի շարք մանր ու մեծ յօդուածներ, որոնց մէջ արտայայտուած գաղափարական խտացումներն ու բարձրացուած հարցերի մեծագոյն մասը «Խենթի» գրութեան ընթացքում իբրեւ կեանքից եկող ազդակներ բեկուտ են Բաֆֆու ստեղծագործական երեւակայութեան մէջ, նրա գրչի տակ ձեռք են բերում վիպական ձեւ ու կերպ եւ որպէս իրականութեան՝ կենսական փաստի գեղարուեստական նկարագրութիւններ, մտնում են «Խենթի» վիպական կառուցուածքի մէջ, դառնում են հիմնական գործողութեանը յարակցող դրուագներ: Այս մօտեցումը, սկսած «Ձալալեղզին» վիպակից, դառնում է Բաֆֆի վիպասանի ստեղծագործական նախասիրութիւններից մէկը եւ կիրառւում է գրեթէ բոլոր գործերի մէջ, որի ամենացայտուն օրինակը կարելի է համարել «Խենթը» վէպը:

1879 թ. կէսերին Բաֆֆին Ագուլիսից ընտանիքով տեղափոխուում է Թիֆլիս: Այստեղ Բաֆֆին բաւականին ազատ էր եւ լայն հնարաւորութիւն ունէր իր աշխատութիւններով զբաղուելու: Այս իմաստով խիստ յատկանշական է նրա Ա. Աւթանդիլեանին գրած 29 դեկտեմբերի թուակիր նամակը: «Այժմ, - գրում է նա, - ես իմ աշխարհի մէջն եմ գտնուում, որ վաղուց փափագելի էր գրաւոր աշխատանքը միշտ էլ եղել է իմ կեանքի նպատակը եւ գոհ եմ, որ այդ աշխատանքով կարողանում եմ մի կողմից իմ ապրուստը հայթայթել, միւս կողմից՝ իմ մտքերը տարածել»: Պէտք է ենթադրել, որ «Խենթի» գրութեան աշխատանքների մեծագոյն մասը իրականացուել է հէնց այս շրջանում, երբ նա արդէն տեղափոխուել էր Թիֆլիս: Այս ամէնով հանդերձ պէտք է փաստարկել, որ 1879 թ. դեկտեմբերի վերջերին «Խենթի» տպագրութիւնը տակաւին աւարտուած չէր: Եթէ տարեվերջին «Խենթի» գրութիւնը աւարտուած լինէր, ապա Գրիգոր Արծրունին իր սովորութեանը համաձայն, մեծ թուով բաժանորդներ ներգրաւելու նպատակով, կարող էր վէպի տպագրութիւնը սկսել «Մշակի» տարեվերջեան համարներում: «Խենթի» այդ շրջանում անաւարտ լինելու վերաբերեալ մի ակնարկ կայ նաեւ Ալեքսանդր Քալանթարեանի յուշերում: Վերջինիս վերջիշումի համաձայն 1879 թուականի դեկտեմբերին Գրիգոր Արծրունու յանձնարարութեամբ «Մշակի» մի քանի աշխատակիցներ հաւաքուում են խմբագրատանը, որտեղ Բաֆֆին պէտք է կարդար «Խենթը» վէպը՝ ձեռագիր վիճակում: Մինչեւ կը սկսուէր ընթերցանութիւնը, յանկարծ հրդեհուում է խմբագրատան դիմացի խանութներից մէկը: Բոլորը վազում են փողոց, սկսում է աղմուկ, շփոթ, իրարան-

ցում: «Բաֆֆին, - պատմում է Ալեքսանդր Քալանթարը, - կանգնած էր լուսամուտի առաջ եւ դիտում էր հրդեհի զարգանալը: Հրեղէն լեզուները ձգուում էին վերեւ եւ լիզում էին պատերը»: Ամբողջ ժամանակ Բաֆֆին լուռ դիտում էր, թէ ինչպէս կրակը երկինք է բարձրանում՝ լափելով շինութիւնը:

Ընթերցանութիւնը յետաձգւում է: Յաջորդ օրը, երբ Բաֆֆին կարդում է «Խենթը», Բայազետի հրդեհի նկարագրութեան մէջ ունկնդիրները զարմանքով տեսնում են նախորդ օրուայ դէպքերի նկարագրութիւնը: «Ես օգտուեցի կրակի տեսարանից, - բացատրում է Բաֆֆին, - աւելի լաւ խմբագրելու եւ աւելի համապատասխան բառեր գործածելու Բայազետի հրդեհի տեսարանում»: Ա. Քալանթարի յուշերը հետաքրքրական են ու արժէքաւոր երկու առումով: Նախ շարունակութեան մէջ նա բերում է մեզ հետաքրքրող հարցի վերաբերեալ մի շատ կարեւոր վկայութիւն. «... ընթերցանութիւնը չվերջացաւ, - գրում է նա, - եւ որքան յիշում եմ վէպը չէր էլ աւարտուած» (ընդգծումը իմն է Ն.Ս.):

Ըստ «Մշակում» հրատարակուած հաղորդագրութեան, յիշեալ հրդեհը տեղի է ունեցել դեկտեմբերի 24-ին, հետեւաբար վէպի ընթերցանութիւնը կատարուել է դեկտեմբերի 25-ին: Այս նշանակում է, որ 1879 թ. դեկտեմբերի վերջերին վէպի գրութիւնը տակաւին աւարտուած չէր: «Խենթի» անաւարտ լինելու փաստը ամենայն հաւանականութեամբ յայտնի է եղել նաեւ Արծրունուն, սակայն այն հանգամանքը, որ նա «Մշակում» հաղորդագրութիւն է հրատարակել եկող տարուայ յունուարին վէպը լրագրում տպագրելու մասին, հիմք է տալիս ասելու, որ գրութիւնը թէեւ աւարտուած չի եղել, սակայն մէկ ամիս ժամանակամիջո-

ցը բաւարար է համարուել այն աւարտին հասցնելու համար:

Ալեքսանդր Քալանթարի յուշը կարեւորութիւն է ներկայացնում նաեւ Բաֆֆու ստեղծագործական լաբորատորիայի ուսումնասիրութեան առումով: Հրդեհի միջազգայի առիթով նրա արած խոստովանութիւնը ցոյց է տալիս, թէ Բաֆֆին ինչպիսի վարպետութեամբ է օգտուել կենսական փաստից, վէպում Բայազետի հրդեհի գեղարուեստական պատկերը կատարելութեան հասցնելու համար: Բանասիրական հետազոտութիւնը պարզում է, որ Բաֆֆին «Խենթը» մէջ մեծ հմտութեամբ է օգտագործել դիպուածի ընձեռած հնարաւորութիւնը, վէպի ինչպէս գրութեան, այնպէս էլ վերամշակման ընթացքում:

«Խենթի» ընթերցման օրից անցնում է Արծրունու խոստացած մէկ ամիս ժամանակամիջոցը եւ, այսուհանդերձ, Բաֆֆին հնարաւորութիւն չի ունենում ճիշտ ժամանակին կատարելու խմբագրի տուած խոստումը: Վէպը «Մշակում» սկսում է լոյս տեսնել միայն փետրուարի 25-ից յետոյ:

Եւ այսպէս 1880 թ. փետրուարի 26-ին սկսում է եւ յունիսի 4-ին աւարտում է Բաֆֆու «Խենթը» վէպի տպագրութիւնը «Մշակ» լրագրում:

Դեռեւս չէր աւարտուել «Խենթի» տպագրութիւնը «Մշակում», երբ հեղինակը տարբեր տեղերից բազմաթիւ նամակներ է ստանում, որոնք իրենց շնորհակալութիւնն ու գոհունակութիւնն են յայտնում հեղինակին վէպը «Մշակում» հրատարակելու առթիւ, ցանկանում են տեսնել «Խենթը» առանձին գրքով տպագրուած:

Իր ընթերցողներին գոհացում տալու համար Բաֆֆին ստիպուած է լինում

«Մշակում» հանդէս գալ «Մի առաջարկութիւն» խորագիրը կրող յօդուածով: ««Մշակի» խմբագրութեան մէջ, - գրում է նա, - ստացուեցան բազմաթիւ նամակներ, որոնց մէջ ցանկութիւն են յայտնում, որ «Խենթը» տպագրուի առանձին գրքով: Որքան էլ թանկագին լինէր կատարել մեր ընթերցող հասարակութեան յարգելի բաղձանքը, այսուամենայնիւ ցաւելով պիտի ասեմ, ինձ անհնար է այդ պահանջին լրում տալ, որովհետեւ պակասում են թէ՛ ժամանակ եւ թէ՛ նիւթական միջոցներ տպագրութեան համար»: Խօսելով հրատարակչական գործը յանձն առնող առանձին անձանց ու կազմակերպութիւնների մասին, Բաֆֆին շարունակում է. «... ինչ վերաբերում է «Խենթի» եթէ գնահատում են նրա ժամանակակից նշանակութիւնը, եթէ ցանկանում են, որ այդ աշխատութիւնը առանձին գրքի մէջ ամփոփուելով՝ աւելի տարածուէր եւ աւելի մատչելի լինէր մեր ընթերցող հասարակութեանը, ես պատրաստ եմ տալ իմ համաձայնութիւնը եւ ընդունել ամենանպաստաւոր պայմանները առաջին տպագրութեան իրաւունքի մասին»⁴:

Այս ամէնի կողքին գոյութիւն ունէր նաեւ տրամագծօրէն տարբեր մօտեցում: «Մեղու Հայաստան» լրագրի շուրջը համախմբուած մտաւորականները սուկիններով են ընդունում «Խենթի» ասպարէզ գալը: «Մշակում» տպագրուած մի հաղորդագրութիւնից յայտնի է դառնում, որ Ալեքսանդրապոլում մի խումբ մեղուականներ, ղեկավար լինելով խենթի երազից, այնտեղ տեսնելով բողոքականութեան քարոզ եւ կրօնափոխութեան վտանգ՝ պատրաստուում են «խնդիր տալ հոգեւոր կառավարութեանը, որ նա եւս իր կողմից խնդրէ ուր հարկն է, որ «Մշակը» դադարեցնեն»⁵:

«Խենթը» առանձին գրքով լոյս ըն-

ծայելու առիթով հեղինակի հրապարակած կոչը առանց հետեւանքի չի մնում, շուտով Թաւրիզում նրա աշակերտ Աբէլ Ապրեսեսանը մի նամակով դիմում է Բաֆֆուն եւ թոյլտուութիւն է խնդրում «Խենթը» Շուշիում տպագրելու համար: Բաֆֆին սիրայօժար պատրաստակամութեամբ տալիս է իր համաձայնութիւնը, եւ 1880-ի սեպտեմբերից սկսում է վէպի շարունակը Շուշիի Միրզաշան Մահտեսի Յակոբի տպարանում:

Նոյն թուականի սեպտեմբերի կէսերին «Խենթը» տպագրելու խնդրանքով Բաֆֆուն դիմում է նաեւ Մոսկվայի համալսարանի ուսանող Գաբրիէլ Միրզոյեանը: «Ես չկարողացայ կատարել նրա գեղեցիկ ցանկութիւնը, - գրում է Բաֆֆին Մելքոն Փանեանին, - որովհետեւ նրանից առաջ արդէն իրաւունք էի տուած Շուշիում տպագրելու»:

Նոյն օրերին «Խենթը» ռուսերէն թարգմանելու խնդրանքով նրան դիմում է Պետերբուրգի հայ ուսանողներից մէկը, Բաֆֆին սրան եւս տալիս է իր համաձայնութիւնը:

1881 թ. ապրիլի 1-ին «Մշակ» լրագրի «Յայտարարութիւններ» բաժնում հրատարակում է հաղորդագրութիւն, որ մամուլի տակից դուրս եկաւ եւ բաժանորդներին կ'ուղարկուի Բաֆֆու «Խենթը» վէպը: «Գիրքը դուրս թողնուեց տպարանից, - գրում է «Խենթի» սրբագրիչ Լէօն, - եւ հալուեց սպառուեց մի քանի շաբաթուայ ընթացքում: Այս մի անսովոր հայերէն գիրք էր: Երբեք եւ ոչ մի հայերէն գիրք այդպիսի համատարած չափերով այդքան խորը կերպով դիւրիչ ազդեցութիւն չէր արել հայ մտքի վրայ...»

Զմայլուած էինք, ո՛չ, աւելի ճիշտ ասեմ, կախարդուած էինք... Քանի՛ քանի անգամ կարդացի, վեց թէ եօթ ան-

գամ, եւ դարձեալ չէի կշտանում:

Զմեռուայ մի ցուրտ գիշեր, - շարունակում է նա, - ժամը 2-ին ես տուն էի գնում մի կոչունքից: Շուկայի հրապարակում մեծ խարոյկ էր վառուած եւ նրա առջեւ իմ լաւ ծանօթ գիշերապահն էր նստած՝ ձեռքին մի գիրք: Մօտենում եմ, բարեւում, նա հազիւ է կարողանում կտրուել գրքից եւ ինձ ասում է ցոյց տալով «Խենթը», - այ գիրք... երեք ժամ է կարդում եմ եւ այնքան յափշտակուած եմ, որ չեմ կարողանում վեր կենալ, իմ շրջագայութիւնը կատարել, ով գիտէ, գուցէ արդէն գողերը կտորատել են խաւովները դռները»:

Նոյն թուականի ապրիլի 22-ին «Մշակում» տպագրուած թղթակցութեան մէջ Յովհաննէս Աթանասեանը յայտնում է, որ ինքն ու Ա. Տէր-Մարութեանը սկսել են թարգմանել «Խենթը» վէպը եւ խնդրում են, որ եթէ կան ուրիշ թարգմանողներ, ապա թող լրագրութեան միջոցով տեղեակ պահեն իրենց:

«Խենթը» հիացողներից ու համակրողներից բացի ունենում է նաեւ իր հակաակորդները: Բաֆֆին «Դաւիթ Բեկի» հետքերով մեկնել էր Ղարաբաղ, երբ «Մեղու Հայաստան» լրագրում լոյս է տեսնում նրա երդուեալ հակաակորդ Հայկունու եղիշէ քահանայ Գեղամեանի «Մատենախօսականը», նուիրուած վիպասանի «Փունջի» հատորներին եւ «Խենթը» վէպին:

Զկարողանալով շրջանցել վէպի արժանիքները, Հայկունին, այնուամենայնիւ, աշխատում է արժէզրկել «Խենթը», որակելով այն իբրեւ «մի փառաւոր հեքիաթ»: Հայկունու ատելութեան բուն դրդապատճառը այն բացասական վերաբերմունքն էր, որ Բաֆֆին յանձինս Տէր-Մարութի, դրսեւորել է վէպի մէջ հայ հոգեւորականութեան հանդէպ:

1882 թուականի փետրուարին իրա-
մատուրգ բանաստեղծ թարգմանիչ Թով-
մաս Թերզեանը Կ. Պոլսից «Մշակի»
թղթակից Գր. Նիկողոսեանի միջնորդու-
թեամբ Բաֆֆուց թոյլտուութիւն է
խնդրում «Խենթը» ֆրանսերէն թարգմա-
նելու՝ «եւրոպական հասարակութեանը
մեր գրականութեան եւ մեր ներքին
կեանքի հետ ծանօթացնելու համար»:
Բաֆֆին թէեւ սիրով տալիս է իր համա-
ձայնութիւնը, սակայն վէպի թարգմանու-
թիւնն ու տպագրութիւնը անյայտ պատ-
ճառով չի իրականացուում:

«Խենթի» աննախադէպ յաջողու-
թեան գաղտնիքը ժողովրդի կեանքի հա-
րազատ արտացոլման, գրողի հանդէս բե-
րած արդիականութեան սուր զգացողու-
թեան, ինչպէս նաեւ վիպական այն հե-
տաքրքիր հիւսուածքի մէջ էր, որի անմը-
ցելի վարպետն էր Բաֆֆին: Բայագետի
հայերի կոտորածը, Վաղարշապատի փո-
ղոցներում թափառող անօթեւան ու սո-
վալլուկ գաղթականների ողբալի վիճակը,
ալաշկերտցիների լացն ու կոծը, տանու-
տէր Մկրտի ընտանիքի թշուառ գրութիւ-
նը եւ ապարանցի Սամսոնի քաջագործու-
թիւնները բեկուելով գրողի ստեղծագոր-
ծական վառվռուն երեւակայութեան մէջ,
իրենց իւրայատուկ արտացոլումն էին
գտել այս վէպի մէջ: «Խենթի» գրութեան
համար փաստական աղբիւր են եղել այն
իրական դէպքերը, որ վիպասանը գրի էր
առել Դիլիջանի անտառում մասնակիցնե-
րի եւ ականատեսների բերանից, ինչպէս
Ջուլֆայում, այնպէս էլ Թիֆլիսից Ագու-
լիս ճանապարհորդելու ընթացքում:
«Խենթում» նկարագրուած ծերունի Խա-
չոյի համար նախատիպ է եղել ալաշ-
կերտցի գաղթական տանուտէր Մկրտն, ո-
րի հետ Բաֆֆին զրուցում է Ախտայի
գոմերից մէկում: Իրական անձնաւորու-
թիւններ են նաեւ Լալան, պարոն բժշկա-

պետը, աբեղան՝ Յովհաննէս հայր սուրբը,
Մելիք-Մանսուրը, Թոմաս էֆենդին, Տէր-
Մարուքը, տիրացու Սիմոնը, որոնց գրո-
ղը հանդիպել էր Վաղարշապատի գաղ-
թականների մէջ: Պարոն Դուդուկչեանի
կերպարը նոյնպէս հեղինակը վերցրել է
կեանքից: Նա Կ. Պոլսի մտածող դասի
այն թարմ ուժերից մէկն է, որոնք «ազ-
նիւ են, բարեմիտ եւ ցանկանում են, որ
հայն էլ թօթափի Թուրքիայի լուծը» ու
թէեւ ունեն գործելու մեծ եռանդ: Բայց
իրենց ընտրած եղանակների մէջ ոչ
միայն անփորձ են, այլեւ անընդունակ:
Կեանքից էր գալիս նաեւ հայ ժողովրդի
այն ջերմ վերաբերմունքը, որ նա ունէր
ուսանների նկատմամբ, այն հաւատը, որ
հայութիւնը տածում էր ուսական յաղ-
թական զէնքի հանդէպ: Տանուտէր Խա-
չոյի «Ռուսները կը գան եւ մեզ կ'ազա-
տեն» եւ Դուդուկչեանի «Ես հաւատում
եմ, որ ուսաները ամէն կերպ կ'օգնեն
մեզ» խօսքերի մէջ Բաֆֆին մարմնաւո-
րել է հայ ժողովրդի նուիրական ցանկու-
թիւնը, որ թրքական բռնապետութեան
մէջ հեծեծող բազմահազար հայութեան
երազանքն էր: Ռուսասիրութիւնը, որ
Բաֆֆին ժառանգել էր իր մեծ նախորդ
Աբովեանից, դարձել էր նաեւ տանուտէր
Խաչոյի հաւատամքը: Այսպիսով, ուսու
ժողովրդի նկատմամբ եղած վերաբեր-
մունքը Բաֆֆու ստեղծագործութեան
մէջ ոչ միայն հայ գրականութեան ազ-
նիւ աւանդների օրգանական շարունա-
կութիւնն էր, այլեւ հասարակական
կեանքից ու միջազգային դրութիւնից
անմիջականօրէն բխող հաւատամք:

«Խենթը» Բաֆֆու մեծ տաղանդի
մի նոր արտայայտութիւնն էր, նախորդ
երկից աւելի կատարեալ ու արժէքաւոր:
Վիպասանի այն գիրքն էլ կարդացուում է
յափշտակութեամբ, գրաւում ընթերցողնե-
րի հոծ զանգուածներ: Երկին մեծ հմայք

էր տալիս ուսանողական այն վարակիչ
շունչը, որն ընդհանրապէս յատուկ է
Բաֆֆու ստեղծագործութեանը: Չի կա-
րելի ժխտել, որ գրողի երկերի արտասու-
վոր յաջողութիւնը նաեւ սիւստային հե-
տաքրքիր, լարող հիւսուածքի, անակնկալ
դիպուածների տաղանդաւոր զուգորդում-
ների, գեղարուեստական յստակ ու մատ-
չելի շարադրանքի մէջ է: Սա վիպասանի
ժողովրդականացման գրաւականներից
մէկն էր: Սխալուած չենք լինի, եթէ ա-
սենք, որ ոչ մի հայ գրող, Բաֆֆուց ա-
ռաջ կամ յետոյ, այնպիսի յափշտակու-
թեամբ չի կարողացուել ու գերել ընթեր-
ցողներին, որքան Բաֆֆին: Նրա երկերը
խլում են միմեանց ձեռքից, նրա գրքե-
րի էջերը մաշում են ձեռքից-ձեռք անց-
նելով: Բաֆֆու վէպերը հաւասար յափշ-
տակութեամբ կլանում էին թէ՛ դարոցնե-
րում, թէ՛ գեղջկական խրճիթներում,
կարդում էին ժողովրդի ամենաբազմա-
զան խաւերը՝ մտաւորականն ու աշակեր-
տը, նոյնիսկ հազիւ գիրկապ անող ար-
հեստաւորն ու գիւղացին: Կարդում էին
բարձրաձայն՝ կարգալ չիմացողների հա-
մար, կարդում էին Թիֆլիսում եւ Պոլ-
սում, նոր Նախիջեւանում եւ Ագուլի-
սում, Վանում ու Մուշում, Երեւանում
ու Թաւրիզում, երկրի ամենահեռաւոր
ծայրերում: Չափազանցութիւն չի լինի,
եթէ ասենք, որ Բաֆֆին հայ ժողովրդին
կարգալ սովորեցրեց: Դրա մէջ էր մեծա-
տաղանդ վիպասանի պատմական խոշոր
ծառայութիւններից մէկը:

Այսպիսի լայն ճանաչման գրողը չէր
կարող հասնել, եթէ արտայայտած չլինէր
իր ժողովրդի նուիրական գաղափարները,
ժամանակի շիկացած մթնոլորտը, ազա-
տասիրական առաջաւոր մտքերը, եթէ
Բաֆֆին ամբողջ խորութեամբ չիմանար
ժամանակի պահանջը, չգիտենար, թէ ա-
զատութեան տենչով այրուող ժողո-

վուրդն այդ ժամանակաշրջանում ինչ է
պահանջում եւ սպասում իր գրողից:

Բաֆֆու աննախընթաց յաջողու-
թեան գաղտնիքը ամէնից առաջ կեանքի,
ժամանակի հետ ունեցած ամենախորը
անքակտելի կապի մէջ էր:

«Խենթում» արտայայտուել էին հայ
ժողովրդի ոչ միայն ազատատենչ
ձգտումները, այլեւ այն թուլութիւններն
ու ստուերոտ կողմերը, որ կային այդ
ձգտումների իրականացման ճանապար-
հին, այլեւ այն պատրանքներն ու խան-
գարուած երազները, որ փայտայտում էր
սին խոստումներից արբեցած ժողովուր-
դը, յոյսը դնելով կոնգրեսից հայցուող
վարչական ինքնավարութիւն կոչուող
մտայնութեան վրայ:

Պարոն Դուդուկչեանի քարոզած
զէնքի միջոցով Բալկանեան ժողովուրդ-
ների օրինակով պայքարելու գաղափարը
լայն արձագանգ չի գտնում գիւղացինե-
րի մէջ, նրան հասկանում են քչերը
միայն, ուսմիկները Դուդուկչեանին
խենթ են անուանում: Դուդուկչեանի եւ
Վարդանի գաղափարների հանդէպ տա-
նուտէր Խաչոյի եւ նրա որդիների ցուցա-
բերած վերաբերմունքը բացայայտում է
ժողովրդի ձգտումների անկազմակերպ ու
հակասական բնոյթը, որի մէջ էլ, ըստ
Բաֆֆու, թաքնուած էր ազատագրական
գործի բարդութիւններից մէկը: Դուդուկ-
չեանը կրքոտութեամբ սկսում է բացատ-
րել գոյութեան կռուի եւ անձնապաշտ-
պանութեան անքակտելի կապը: Խաչոն
նրան պատասխանում է գեղջկական
պարզութեամբ. անմշակ հողի վրայ սեր-
մերը չեն ծլում, ուրեմն, նախ պէտք է
հողը փափկեցնել, պարարտացնել, այլա-
պէս ծիւրերը կ'ոչնչանան: Ժողովուրդը
հրաշքով չի կարող մի օրուայ մէջ հաս-
կանալ, թէ ինչ է անձնապաշտպանութիւ-
նը: «Դուք պոլսեցիներդ, պէտք է վաղ

սկսելիք այդ գործը, - ասում է Խաչոն, - դուք պէտք է շատ տարիներ առաջ մեզ սովորեցնելիք, թէ ինչ բան է անձնապաշտպանութիւնը, եւ այսօր քրիստոնեաների այժմեան պատերազմի ժամանակ ձեր ցանած սերմերը ցանկալի պտուղներ կը տային: Դուք չնախապատրաստեցիք մեզ»: Մերունի Խաչոն ընդունում եւ հասկանում է անձնապաշտպանութեան կարեւորութիւնը, սակայն գործնական քայլի չի դիմում: Նրա որդիներից մէկը համակրում է Դուրուկչեանի գաղափարները, միւսը՝ հակակրում: «Եղբայր, քեզանից արեան հոտ է գալիս, - ասում է Հակոն, - հեռացիր մեր տնից»: Գրողը ներկայացնելով Խաչոյին եւ նրա որդիների իրարամերժ հակումները, ցանկանում է ցոյց տալ, որ ժողովրդի մէջ չկայ նպատակի միասնութիւն, բացակայում է համախմբուածութիւնը: Հէնց այստեղ էլ Բաֆֆին տեսնում էր ազատագրական շարժման գործի ամենամեծ թուլութիւնը, ուստի եւ այդ բաղձալի պայքարի անիրական լինելը:

Տանուտէր Խաչոյի ընտանիքի պատկերը ընդհանրացման միջոցով Բաֆֆին բացայայտում է Ռուս-թրքական պատերազմի ընթացքում Արեւմտեան Հայաստանում ապրող ժողովրդի սոցիալ-քաղաքական գոյավիճակն ու մտածելակերպը: Մեծ վիպասանը ինքնատիպ կառուցուածքի մէջ թէեւ համոզիչ դրուագներով ցոյց է տալիս, որ երկրում չկար ներքեւից եկող պայքարի համար անհրաժեշտ նախադրեալներ, իբրեւ հասարակական գործիչ նա սրտի ցաւով է արձանագրում, որ հայութիւնը պայքարի հարցում անկարող եղաւ հետեւելու Բալկանեան ժողովուրդների օրինակին:

Այս ամէնը «Խենթում» արծարծուած գաղափարների մէկ կողմն է միայն. ընդ որում արմատական կողմը, սակայն Բաֆ-

ֆին իբրեւ ժամանակաշրջանին հաւատարիմ գործիչ, իբրեւ զգայուն ու շրջահայեաց վիպասան, «Խենթում» տեղ է յատկացրել ազատութիւն ձեռք բերելու նախ վերելից եկող միջոցին:

Դիւանագիտութեան պատմութիւնից յայտնի է, որ պատերազմում յաղթանակած Ռուսաստանը, ռուս զինուորի արեան գնով ձեռք բերած յաջողութեան պտուղները պէտք է տնօրինէր Բեռլինի կոնգրեսի թողտուութեամբ: Այս սահմանափակումը վաւերացուած է բազմակողմ պայմանագրով, որին մենք չենք անդրադառնայ: Սակայն, հարկ է նշել, որ այդ շատ էր խանգարում ռուսական դիւանագիտութեանը, որպէսզի նա կարողանայ իր ուզածով տնօրինել Թուրքիայի հետ վարելիք բանակցութիւնները, այդ թուում նաեւ Արեւմտեան Հայաստանին վերաբերող հարցերը:

Թուրքիայի դէմ սանձազերծուած պատերազմը, ինչպէս յայտնի է, մղուած էր արեւելեան քրիստոնեաներին ազատագրելու անուան տակ: Հասկանալի է, որ այն թեկուզ եւ սիմվոլիկ չափով վերաբերում էր նաեւ Արեւմտեան Հայաստանին: Սկսած 1878 թուականից, միջազգային դիւանագիտական փաստաթղթերում արձարծուած են նաեւ Արեւմտեան Հայաստանին վերաբերող խնդիրները, որոնք այնուհետեւ յայտնի են դառնում Հայկական հարց յորջորջումով:

Նախքան Հայկական հարցը կը քննարկուէր որեւէ ժողովում, ռուսական դիւանագիտութեան առաջ գնացող նկրտումները կանխելու նպատակով Պոսում անգլիական դեսպան Հայարդը դրդում է հայոց պատրիարքին, որպէսզի հայերը գումարուելիք համաժողովից պահանջեն վարչական ինքնավարութիւն եւ դիւանագիտական նկատառումներով հաւաստիացնում է, որ անգլիական կառա-

վարութիւնը կը պաշտպանի հայերի այդ առաջարկը:

Երբ Բեռլինի կոնգրեսից անցել էր ուղիղ երկու տարի, ո՛չ միայն Բաֆֆու, այլեւ շատերի համար արդէն պարզ էր, որ արեւմտահայերին տրուելիք վարչական ինքնավարութիւնը իրենից ներկայացնում էր գեղեցիկ հեռանկարով պատրանք, խաթարուած երազ եւ ոչինչ աւելի: «Խենթի» գրութեան ընթացքում, երբ պէտք է անդրադառնար այդ խնդրի արտացոլմանը, վիպասան Բաֆֆու համար պարզ էր, որ վարչական ինքնավարութիւն կոչուող այդ խնդիրը դիւանագիտական սադրանք էր, ապրող հայութեան համար արդէն մեռնող երազ: Առանց խաթարելու վէպի կառուցուածքային յէնքը, Բաֆֆին որոշում է ժամանակին «Կայծերից» դուրս նետած այդ գաղափարի գեղարուեստական պատկերը՝ «Կայծերի վերջը» վերնագրով էպիլոգը վերանայել, նոր դրուագներով հարստացնել ու մտցնել «Խենթի» մէջ իբրեւ երազ:

Այս տեղատուութեան համար Բաֆֆին ունէր մէկից աւելի հիմնաւոր պատճառներ:

«Կայծերի վերջի» գրութեան շրջանում վարչական ինքնավարութեան գաղափարի իրականացումը կարծես թէ այնուհետ չէր թուում, եւ վիպասան Բաֆֆին «Կայծերի» նախորդ տարբերակում ներկայացնում է իբրեւ կենցաղում գոյութիւն ունեցող իրողութիւն, որը սակայն Բեռլինի կոնգրեսից յետոյ, նոր հանգամանքների հետեւանքով, կորցնում է իր սոցիալ-քաղաքական կշիռը, դառնում է այնուսալի եւ իբրեւ ժամանակավրէպ մտայնութիւն՝ դուրս է մղում «Կայծերից»:

«Խենթի» գրութեան ընթացքում այդ գաղափարը թէ՛ ժողովրդի եւ թէ՛ մտաւորականութեան մէջ արդէն դարձել

էր այնուսալի, դիտուում էր իբրեւ խաթարուած երազ, ուստի վէպում պէտք է ներկայացուէր իբրեւ մեռնող ցանկութիւն եւ Բաֆֆին այդ ընթացքին է հրամցնում իբրեւ չիրականացուող գաղափար, իբրեւ ուտոպիայ: Հասկանալի է, որ այստեղ խօսքը վերաբերում է ոչ թէ ամբողջ վէպին, այլ Վարդանի երազին:

Գլուխը դրած Հալայի հողաթմբին, Վարդանը կէս քուն, կէս արթուն վիճակում տեսնում է երազեալ Հայաստանը: Անցել է երկու հարիւր տարի, փոխուել է երկրի հասարակական կառուցուածքը, չկան հարստահարիչները, ապահովուած է ամէն հայի ազատութեան իրաւունքը, ամէն ոք ապրում է իր աշխատանքի վաստակով, իր ճակատի քրտինքով: Զարգացել է արդիւնաբերութիւնը, երկրում կառուցուել են բազմաթիւ գործարաններ, շոգին փոխարինում է ձեռքի աշխատանքին, ընդլայնուել է ներքին ու արտաքին առեւտուրը, երկրում լայն տարածում է ստացել ուսումնական գործը, ծաղկել է գիւղատնտեսութիւնը: Չկայ մասնաւոր սեփականատիրութիւնը, վերացել է շահագործումը, արտադրուող բոլոր տեսակի բարիքները պատկանում են գիւղական համայնքին եւ ամէն մի գիւղացի հաւասար մասն ունի դրա մէջ:

Սակայն, եզրակացնում է Բաֆֆին, այս բոլորը, թէկուզ եւ երկու հարիւր տարի յետոյ, Ալաշկերտի հովտի Օ. գիւղում կարող էր իրականութիւն դառնալ այն դէպքում, եթէ Բեռլինի կոնգրեսում Հայաստանին տրուէր իր հայցած վարչական ինքնավարութիւնը, քրիստոնեայ նահանգապետով:

Ինչպէս Վարդանի երազի միջոցով Բաֆֆին վէպում կանխատեսում էր Հայաստանի ապագայ կեանքը, այնպէս էլ խորհրդաւոր աւարտի միջոցով բնութագրում է ստեղծուած կացութիւնը իրական-

նութեան մէջ: Այն պահին, երբ Վարդանը երազում ցանկանում էր մասնակցել երկրի քաղաքական կեանքին, չորս զօրեղ ձեռքեր յափշտակում են նրան եւ ամէն ինչ թաքնուում է գիշերային խաւարի մէջ:

Երազում գործող սիմվոլիկային Բաֆֆին տուել է փոխաբերական իմաստաւորում: Երազը կապել է իրականութեան մէջ, կոնգրեսում գործող իրադարձութիւնների հետ: Չորս զօրեղ ձեռքերը Վեհաժողովին ընթացք տուող այն չորս զօրեղ պետութիւններն են (Անգլիան, Աւստրոհունգարիան, Գերմանիան եւ Թուրքիան), որոնք Բեռլինի կոնգրեսում կործանեցին Հայութեան երազած վարչական ինքնավարութեան ձգտումները եւ զրկեցին ժողովրդին ազատ գործելու հետագայ Հնարաւորութիւնից, պատրանք դարձնելով Հայութեանը տրուելիք վարչական ինքնավարութեան հետ կապուած բոլոր տեսակի վարդապոյն յոյսերը⁶:

Բեռլինի կոնգրեսից յետոյ, ինչպէս տեսանք, Բաֆֆին արեւմտահայերի ազատագրման գործի յաջողութեան գրաւականը տեսնում էր ժողովրդին ազգայնութեան դրօշի ներքոյ միաւորելու եւ դալիքի համար «ժամանակի դէպքերին համապատասխան» նախապատրաստուած լինելու մէջ: Շփուելով ժողովրդի հետ եւ ծանօթանալով նրա տրամադրութիւններին՝ աւելի ուշ այս նոյն եզրակացութեանը հանգում է նաեւ Դուրուկընեանը: Նկատելով, որ իր քարոզած անձնապաշտպանութեան գաղափարը ժողովրդի մէջ պարարտ հող չի գտնում, նա փոխում է իր գործունէութեան բնոյթը, գալիս այն եզրակացութեան, որ ազատութիւն նուաճելու համար պէտք է այդ գաղափարն ընդհանրացուի ժողովրդի գիտակցութեան մէջ. «Երբ որեւիցէ ժողովրդական շարժման գաղափար, - կրկնում է Վարդանը

Սալմանի խօսքերը, - մի քանի անհատների երեւակայութեան ցնորք է միայն եւ տակաւին չէ ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնէ մի մասի մէջ, մի հարուածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինք ոչնչացած կը լինեն: Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մէջ միտք սպանելը անհնարին է»: Ամբոխի մէջ «ժողովրդական շարժման գաղափարը», ըստ նրա, կարելի է ընդհանրացնել երկար ու տեւական նախապատրաստական աշխատանքի միջոցով:

Ինչ վերաբերում է նախապատրաստական ծրագրի իրականացմանը, ապա իբրեւ նախօրինակ Բաֆֆին նկատի ունէր բուլղարների դէպի ազատութեան ուղին տանող յեղափոխական կոմիտէի գործունէութեան փորձը: Որդեգրելով նախապատրաստական ծրագրի իրականացումը, Սալմանը թողնում է իր գործելակերպի նախկին ձեւերը եւ ձեռնամուխ է լինում դպրոցների հիմնադրմանը, որպէս ժողովրդի նախապատրաստման գործի առաջին աստիճան եւ լաւագոյն միջոցի: Ունկնդրելով Խաչոյին, սովորելով ժողովրդից, Դուրուկընեանը այսպէս է բնորոշում իրենց կոչումը. «Մենք այժմ միայն սերմնացանի պաշտօն պիտի կատարենք, բայց ոչ հնձողի: Հունձը պիտի թողնենք ապագայ սերնդին»:

Հունձքը ապագայ սերնդին թողնելու գաղափարը Բաֆֆու մէջ կայունացում է յատկապէս Բեռլինի կոնգրեսից յետոյ եւ դառնում է ազատագրական գործի համար նրա մշակած նոր ըմբռնումի անկիւնաքարը, Բաֆֆին «Խենթի» միջոցով ցանկանում էր ժողովրդին սովորեցնել ազատութիւն ձեռք բերելու ուղին, մի գործելակերպ, ըմբռնում, որն աւելի ցայտուն արտայայտութեամբ դրսեւորուել է «Կայծերի» երկրորդ հատորում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս «Տարագ». 1891, N 48, էջ 707
- 2 Տե՛ս Գրականութեան եւ արուեստի թանգարան, չմշակուած միութիւն. Ն. Աթանեսեանի ֆոնդ:
- 3 Օգտուելով առիթից յարգանքով ու շնորհակալութեամբ ենք յիշատակում յարգելի պրոֆեսոր Ռուբեն Զարեանի անուր: Խ.Ս.:

- 4 Տե՛ս Բաֆֆի, «Երկերի ժողովածոյ», Ե., 1991, հտ. 11, էջ 326:
- 5 Տե՛ս «Մշակ», 1880, N0 146, 22 օգոստոսի:
- 6 Ընդ որում սխալ են այն յօդուածագիրները, որոնք Վարդանի երազը ընդհատող չորս զօրեղ ձեռքերի կողմից կիրառուող արարքի մէջ ցանկանում են ի յայտ բերել Վարդանին վերաբերող իրական յանցանք. չպէտք է սխալուել, դա սիմվոլիկայի շարունակութիւնն է: